# <<Դասախոսն ուսանողի աչքերով>> հարցման արդյունքների ամփոփումը
## (2017-2018 ուս. տարի աշնանային կիսամյակ)

**1**). Հարցմանը մասնակցել են ԵՊԲՀ-ի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներ՝ ըստ ֆակուլտետների հետևյալ բաշխվածությանը՝

| | | Ընդամենը մասնակից | Ընդհանուր բժշկ. | Ստոմ. | Դեղ. | Ռազմ. |
|---|---|---|---|---|---|---|
| 2017 -18թ. 1կիսամյակ | Հք*<br>Օե** | 2657(52 %)<br>334(34 %) | 1870( 49%)<br>283 (32%) | 513 (58%)<br>38 (40%) | 161 (60%)<br>13 (48%) | 113( 67%) |

**2**). 2017-18թ. 1 կիսամյակում հարցմանն ընդգրկված 72 ամբիոններից մասնակցել են 70 -ը, որոնցից 3-ի ընդհանուր գնահատականը 3,5-ից ցածր է եղել: 20 ամբիոններում օե-ի տված գնահատականը 3,5-ից ցածր է, հք-ի դեպքում ունենք 2 ամբիոն. Նշված ամբիոններից 6-ի դեպքում մասնակցությունը 30%-ից ցածր է.

**3**).51 (72.8%) ամբիոններում դասավանդման որակի վերաբերյալ հարցերից գոնե մեկը գնահատված է 3,5 միավորից ցածր(21հք և 36օե), 32 (52%) ամբիոններում (9հք և28օե)ամբիոնի դասավանդման որակին վերաբերյալ հարցերից մի քանիսն են գնահատված 3,5 միավորից ցածր:

4). Հարցված ամբիոններում ցածր են գնահատվել հատկապես հետևյալ հարցերը՝

I.Դասախոսությունների և գործնական պարապմունքների ժամանակ ի՞նչ չափով էիք օգտվում ամբիոնի ուսումնական միջոցներից (մուլյաժներ, սիմուլյատորներ, պատրաստուկներ, պաստառներ և այլն)

II. Դասընթացի սկզբում ամբիոնի կողմից որքա՞ն հստակ են ներկայացվել առարկայի կրթական վերջնարդյունքները (գիտելիքները, կարողությունները, որոնք ուսանողը պետք է ձեռք բերի դասընթացի վերջում)

III. Դասընթացի վերջում որքանո՞վ ձեռք բերեցիք համապատասխան կրթական վերջնարդյունքներ

IV. Գրադարանում (կամ ամբիոնում) առարկայի յուրացման համար անհրաժեշտ գրականությունը որքանո՞վ էր բավարար

V. Արդյունավե՞տ էր արդյոք կազմակերպված հիվանդ - ուսանող շփման գործընթացը

5). Ըստ հարցերի 3,5 միավորից ցածր գնահատականներ ունեցող անբիոնների քանակներն են՝

___________________________________

*Հք-ՀՀ քաղաքացիներ

**Օե-օտարերկրյա քաղաքացիներ

**Ամբիոններ (բակալավր 1-3)**

| **Դասընթացի** | **Դասընթացի** | **Դասախոսությ** | **Գրադարան** | **Ձեր կարծիքը** | **Ձեր կարծիքը** | **Օտար** |
|---|---|---|---|---|---|---|

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **սկզբում ամբիոնի կողմից որքա՞ն հստակ են ներկայացվել առարկայի կրթական վերջնարդյունքները (գիտելիքները, կարողությունները և հմտությունները, որոնք ուսանողը պետք է ձեռք բերի դասընթացի վերջում)** | **վերջում որքանո՞վ ձեռք բերեցիք համապատասխան կրթական վերջնարդյունքներ (գիտելիք և կարողություն)** | **ունների և գործնական պարապմունքների ժամանակ ի՞նչ չափով էիք օգտվում ամբիոնի ուսումնական միջոցներից (մուլյաժներ, սիմուլյատորներ, պատրաստուկներ, պաստառներ և այլն)** | **ում (կամ ամբիոնում) առարկայի յուրացման համար անհրաժեշտ գրականությունը որքանո՞վ էր բավարար** | **ամբիոնի թեստերի և/կամ ընթացիկ ինքնուրույն առաջադրանքների վերաբերյալ** | **ամբիոնի կողմից կազմակերպված դասախոսությունների վերաբերյալ** | **լեզվի մակարդակը (գրականություն, մեթոդական նյութեր)** |
| ------- | ------- | 2(3%) hք | 2(3%) hք | 2(3%) hք | 1(1%) hք | ------ |
| 12(17%) oե | 13(19%) oե | 14(20%) oե | 15(21%) oե | 8(11%) oե | 9 (13%)oե | 3(4%) oե |

Ամբիոններ (բակալավր 4-5)

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **Դասընթացի սկզբում ամբիոնի կողմից որքա՞ն հստակ են ներկայացվել առարկայի կրթական վերջնարդյունքները (գիտելիքները, կարողությունները, որոնք ուսանողը պետք է ձեռք բերի դասընթացի վերջում)** | **Դասընթացի վերջում որքանո՞վ ձեռք բերեցիք համապատասխան կրթական վերջնարդյունքներ** | **Դասախոսությունների և գործնական պարապմունքների ժամանակ ի՞նչ չափով էիք օգտվում ամբիոնի ուսումնական միջոցներից (մուլյաժներ, սիմուլյատորներ, պատրաստուկներ, պաստառներ և այլն)** | **Արդյունավետ էր արդյոք կազմակերպված հիվանդ-ուսանող շփման գործընթացները** | **Իրականացվում էին կլինիկական դեպքերի քննարկումներ** | **Գրադարանում (կամ ամբիոնում) առարկայի յուրացման համար անհրաժեշտ գրականությունը որքանո՞վ էր բավարար** | **Ձեր կարծիքը ամբիոնի թեստերի և/կամ ընթացիկ ինքնուրույն առաջադրանքների վերաբերյալ վերբերյալ** |
| ------- | 1 (1%)hք | 5(7%) hք | 8(11%) hք | 1(1%) hք | 4(6%) hք | 2 (3%)hք |
| 4(6%) Oե | 3 (4%)Oե | 19(27%) Oե | 15(21%) Oե | 11(16%) Oե | 12 (17%)Oե | 1(1%) Oե |

Ամբիոններ (մագիստրատուրա)

| **Դասընթաց** | **Դասընթաց** | **Դասախոսու** | **Արդյուն** | **Գրադար** | **Ձեր** | **Եթե տվյալ** | **Օտար** |
|---|---|---|---|---|---|---|---|

| **ի սկզբում ամբիոնի կողմից որքա՞ն հստակ են ներկայացվել առարկայի կրթական վերջնարդյունքները (գիտելիքները, կարողությունները, որոնք ուսանողը պետք է ձեռք բերի դասընթացի վերջում)** | **ի վերջում որքանո՞վ ձեռք բերեցիք համապատասխան կրթական վերջնարդյունքներ** | **թյունների և գործնական պարապմունքների ժամանակ ի՞նչ չափով էիք օգտվում ամբիոնի ուսումնական միջոցներից (մուլյաժներ, սիմուլյատորներ, պատրաստուկներ, պաստառներ և այլն)** | **ավե՞տ էր արդյոք կազմակերպված հիվանդ - ուսանող շփման գործընթացը** | **անում (կամ ամբիոնում) առարկայի յուրացման համար անհրաժեշտ գրականությունը որքանո՞վ էր բավարար** | **կարծիքը ամբիոնի թեստերի և/կամ ընթացիկ ինքնուրույն առաջադրանքների վերաբերյալ** | **առարկան ուսումնասիրել եք նաև բակալավրիատում, ապա որքանո՞վ էր նոր առարկայական ծրագիրը տարբերվում նախորդից և համապատասխանում մագիստրատուրայում ձեռք բերվելիք գիտելիքների վերաբերյալ ունեցած ձեր ակնկալիքներին** | **լեզվի մակարդակը (գրականություն, մեթոդական նյութեր)** |
|---|---|---|---|---|---|---|---|
| ------- | ------- | 4(6%) հք | 4(6%)հք | 1(1%) հք | ------ | ------- | ------- |
| 1(1%) Օէ | ------- | 1(1%) Օէ | 1(1%) Օէ | 1(1%) Օէ | 1(1%) Օէ | 1(1%) Օէ | 1(1%) Օէ |

6). Հարցմանը մասնակցած ամբիոններում ունեցել ենք 3,5 միավորից ցածր միջին գնահատական ստացած դասախոսներ՝ հետևյալ բաշխվածությամբ՝

| | Մասնակից ամբիոնների քանակը | 3,5 միավորից ցածր միջին գնահատական ստացած դաս. ունեցող ամբ. քանակը | Մեկական 3,5 միավորից ցածր միջին գնահատական ստացած դաս. ունեցող ամբ. քանակը | Մեկից ավել 3,5 միավորից ցածր միջին գնահատական ստացած դաս. ունեցող ամբ. քանակը | Մասնակից դասախոս. քանակը | 3,5 միավորից ցածր միջին գնահատական ստացած դաս. քանակը |
|---|---|---|---|---|---|---|
| ընդհանուր | 70 | 36(51%) | 19(27%) | 17(24%) | 814 | 85(10%) |
| հք | 68 | 39(57%) | 18(26%) | 21(31%) | 724 | 73(10%) |
| օէ | 59 | 29(49%) | 13(22%) | 16(27%) | 297 | 54(18%) |

Հք-ի դեպքում 73 դասախոսներից 3-ի դեպքում(4%) քվեարկած ուսանողների մասնակցության տոկոսը ցածր է 30-ից, օէ-ի դեպքում ՝ 54 դասախոսներից 23-ի դեպքում(42%)

7). 2017-18թ. 1 կիսամյակում ընթացիկ որոշ հարցերից 3,5-ից ցածր գնահատական են ստացել 75 դասախոսներ:

Ըստ հարցերի 3,5միավորից ցածր գնահատական ունեցող դասախոսների քանակներն են՝

| | Նյութը մատուցում և քննարկում էր մատչելի ու համակարգված | Բացատրում էր նյութի դժվարամատչելի հատվածները և շեշտադրում առանցքային հարցերը | Ընդգծում էր նյութի մասնագիտական և գործնական հետագա կիրառությունը | Զարգացնում էր ինքնուրույն մտածելակերպ և հնարավորություն էր տալիս ուսանողին զգալու դասի լիիրավ մասնակից | Ուսանողների հարցերին տալիս էր սպառիչ պատասխաներ | Ապահովում էր պատշաճ կարգապահություն | Ուներ հստակ խոսք և տիրապետում էր դասավանդման արվեստին | Բարյացակամ և հարգալից էր ուսանողի նկատմամբ | Օտար լ. իմացությունը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՔ | 14(**2%**) | 7(**1%**) | 6(**0.8%**) | 9(**1.2%**) | 10(**1.4%**) | 3(**0.4%**) | 6(**0.8%**) | ----- | ------- |
| ОԵ | 15(**5%**) | 12(**4%**) | 27(**9%**) | 19(**6%**) | 16(**5%**) | 6(**2%**) | 10(**3%**) | 8(**3%**) | 14(**5%**) |

Հարցման ընթացքում բաց հարցադրմանը պատասխանելու շնորհիվ ուսանողները հնարավորություն են ունեցել նաև արտահայտել իրենց կարծիքը տարաբնույթ խնդիրների և ԲՈւՀ-ում առկա գործընթացների վերաբերյալ: Կարծիքներն ամփոփվում և ներկայացվում են համապատասխան պրոռեկտորներին և դեկաններին: Կարծիքների ամփոփումը կատարվել է ըստ հետևյալ բաժինների՝ Կարծիքների ամփոփումը կատարվել է ըստ հետևյալ բաժինների՝

1.Ընդհանուր մոտեցումներ
2.Կարծիքներ ամբիոնների վերաբերյալ
3.Կարծիքներ դասախոսների վերաբերյալ

**Ընդհանուր մոտեցումներ**

*ՀՀ քաղաքացիներ*

- Պետք է ավելացնել սիմուլյացիոնի օրերը,թեկուզ ցիկլի տեսքով
- Խստացնել հսկողությունը կլինիկաներում դասապրոցեսի նկատմամբ
- Կրճատել դասաժամանակը կամ 80 րոպեն բաժանել 2 քառասունի
- Թեստերը կազմվեն այնպես, որ ստուգեն գիտելիք, այլ ոչ թե հիմնված լինեն անգիր արված տվյալների վրա
- ՌՒսանողներին թույլատրել բացակայել մի քանի օր(գոնե4-5), եթե ցանկանում են մասնակցել միջազգային որևէ ծրագրի
- Չպարտադրել ուսանողին դասի փոխարեն դահլիճ լցնելու գործընթացը ապահովել
- Պետք է փոխել համակարգը, հորիզոն բերել 21-րդ դարի ուսանողին համահունչ մոտեցումներ
- Սխալ է, երբ հայախոս ուսանողներին դասավանդում է ռուսախոս մասնագետ
- Մագիստրատուրայի 1,5 տարին ժամանակի վատնում է
- Բոլոր առարկաների համար ապահովել մատչելի գրականություն, էլեկտրոնային տարբերակը բավարար չէ
- Ընդհանուր բժշկության 3-րդ կուրսում դիֆ. ստուգարքի անվան տակ քննություն է անցկացվում՝ պարապելու օր չտրամադրելով

- Վերանայել ամբիոնների քննական և թեստային հարցաշարերը՝ հաշվի առնելով տրամադրվող ուսումնական նյութերը
- Նյութի ծավալը համապատասխանեցնել ցիկլային առարկաների ժամաքանակին

*Օտարերկրյա քաղաքացիներ*

- Պետք է ավելացնել պրակտիկ դասերը՝ հատկապես զինեկոլոգիայի , վիրաբուժության և սրտաբանության
- Ցանկալի է փորձարկումները դիակների հետ լինեն ավելի հաճախ
- Քննություններից հետո ուսուցողական կլինի ուսանողներին ցույց տալ իրենց աշխատանքները, որպեսզի կարողանան տեսնել և հասկանալ իրենց սխալները
- Դասախոսների լեզվի իմացության մակարդակը ցածր է, պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկել
- Դասագրքերը շատ հին են և չեն համապատասխանում իրականությանը, իսկ դասախոսների կողմից google- ով թարգմանությունը չի ապահովում համապատասխան որակ
- Ցանկալի է օգտվել արտասահմանյան գրականությունից, ինչպես, օրինակ, կենսաքիմիայի ամբիոնում
- Ստոմատոլոգիայում ավելացնել ֆանտոմների հետ աշխատելու պրակտիկան
- Քննությունների ժամկետների մասին տեղեկացնել 1-1.5 ամիս առաջ, որպեսզի հասցնեն պլանավորել արձակուրդը
- Ավելացնել շփումը հիվանդների հետ
- Դասախոսները ավելի շատ պետք է միտված լինեն ուսանողներին աջակցելու , այլ ոչ թե հակառակը
- Ամեն ֆակուլտետ պետք է ունենա իր բուն մասնագիտական գրականությունը